Խնդրում եմ հայտնել ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում քանի՞ անգամ եք քաղաքացիների ընդունելություն կազմակերպել:

Ո՛չ ես, ո՛չ ինձ հետ կապ հաստատող քաղաքացիները չենք հետևում ֆորմալ, բյուրոկրատական ընթացակարգերին՝ իրար հետ շփվելու համար: Քաղաքացիները ինձ դիմում եմ հեռախոսով կամ Ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով և հաղորդակցությունը քաղաքացիների հետ հիմնականում տեղի է ունենում օնլայն: Քաղաքացին շատ արագ նկարագրում է իրեն հուզող հարցերը, եթե կարիք կա պայմանավորվում ենք հանդիպման համար, իսկ եթե հանդիպելու կարիք չկա, ես զբաղվում եմ իրեն հուզող հարցով: Այս ամիսների ընթացքում բոլորովին չզգացի, որ կարիք կա հատուկ ընդունելության ժամեր առանձնացնել ու սպասել թե ով կգա ինձ հետ հանդիպման: Ես էլ չեմ սահմանափակվում միայն հանդիպումների այդ ֆորմատով ու մարդկանց հետ հանդիպում եմ և՛ ԱԺ-ում, և՛ ԱԺ տարածքից դուրս՝ սրճարանում, տարբեր միջոցառումների ժամանակ, համայնքներում և այնտեղ, որտեղ մարդիկ ինձ դիմում եմ:

Ի՞նչ խնդիրներով են քաղաքացիները ձեզ դիմել, արդյոք այդ խնդիրները նպաստե՞լ են ձեզ որևէ օրենսդրական նախաձեռնություն հեղինակելուն կամ գործող օրենքում փոփոխություններ կատարելուն:

Այն բոլոր հարցերով, որոնցով քաղաքացիներն ինձ դիմել են, օրենսդրական փոփոխություններ անելու կարիք չի եղել: Դրանք հիմնականում վերաբերել են իրենց իրավունքի խախտմանը և իրենց ակնկալիքը եղել է այն, որ ես կօգնեմ նրանց խախտված իրավունքի վերականգնման հարցում:

Խնդրում եմ հայտնել նաև, թե գրավոր ինչ առաջարկներ եք ստացել, ովքե՞ր են ձեզ դիմել, քանիսի՞ դեպքում եք կարողացել խնդրին լուծում տալ և առհասարակ քանի՞սն են եղել այնպիսի հարցեր, որոնց լուծումը վերաբերում է պատգամավորի լիազորություններին:

Քաղաքացիների կողմից գրավոր ոչ մի առաջարկ չեմ ստացել: Առհասարակ չեմ պատկերացնում, որ ինձ հետ շփվող քաղաքացիները ձեռագիր նամակ գրեն ու փոստով ուղարկեն: Նրանց համար շատ ավելի հեշտ է ինձ էլեկտրոնային նամակ գրելը կամ Ֆեյսբուքով հաղորդարություն ուղարկել, կամ էլ իմ որևէ գրառում մեկնաբանելը՝ ներկայացնելով իրենց առաջարկները, որոնք ես վերլուծում եմ, դրանց հիման վրա առաջարկներ ներկայացնում կառավարությանը: Ես չեմ կարող հաշվել, թե քանի քաղաքացի է մեկնաբանել իմ գրառումը և ներկայացրել առաջարկներ:, որոնք հետագայում ես օգտագործել եմ: Ինձ դիմած քաղաքացիներից ոչ մեկի հարցի լուծումը չի եղել օրենսդրական դաշտում: Միևնույն ժամանակ, պատգամավորն ունի նաև կառավարության աշխատանքի վերահսկողության լիազորություն և քաղաքացիների կողմից ինձ ներկայացված խնդիրների մեծամասնությունն առաջացել է կառավարության ոչ պատշաճ աշխատանքի արդյունքում: Ես հիմնականում դիմել եմ կառավարության անդամներին,

որպեսզի ուսումնասիրեն հարցերը և լուծում տան: Որոշ հարցեր լուծում են ստացել, որոշներն ընթացքում են, իսկ որոշ հարցեր այդպես էլ լուծում չեն ստացել: